

ԴԱՎԻԹ ԳՅՈՒՐԶԻՆՅԱՆ

բանաստիճական գիրք. թեկնածու, ԳՀԸ

ՀԱՅԱՍՏԱՆՈՒԹՅՈՒՆ ԲԱՌԻ
ՊԱՏՄԱԼԵԶՎԱԲԱՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ

Կան բառեր, որոնք դարաշրջան կամ պատմություն ունենալից չեն զրկվում: Բառեր էլ կան, որոնք պատմական այս կամ այն կարեւոր իրադարձության ցուցիչ-հաղորդիչներն են: Այս կարգի բառերը հսկայական տեղեկատվություն են պարունակում: Կան նաեւ բառ-խորհրդանշներ, որոնք զանազան գաղափարներ են արտահայտում՝ հայրենի եզերքի, կորսված հայրենիքի, ազգի հատկությունների եւ այլն: Բառերի թվարկված տեսակները հաճախ հայելու պես անդրադարձնում են ժողովրդի եւ երկրի պատմությունը, մշակույթը, կենցաղը, հոգեբանությունը, նրանք լեզվի բառապաշարում առանձնահատուկ տեղ են զբաղեցնում եւ կարեւոր դեր ունեն, արժանի՝ հատուկ ուսումնասիրության:

Հայերենի բառապաշարի վրա որոշակի հետք է թողել հայոց պատմության ամենից սահմեկեցուցիչ իրադարձությունը՝ ցեղասպանությունը, որն անասխաղեպ էր մարդկության պատմության մեջ: Այն արմատապես բեկեց հայ ժողովրդի բնականոն զարգացման ընթացքը. ծրագրված զանգվածային սպանդի հետեւանքով հայության զգալի հատվածը բնաջնջվեց, փրկվածները զրկվեցին բնօրրանից, որպես անդարմանելի ցավ՝ ցեղասպանությունը խոր հետք թողեց վերապրողների եւ նրանց սերունդների հոգեբանության վրա, հաճախ նաեւ խաթարեց նրանց կյանքի խաղաղ ընթացքն ու անկաշկանդ առաջընթացը:

Հայերեն մի շարք բառեր եւ բառակապակցություններ կան, որոնք առնչվում են հայոց ցեղասպանությանը (կամ այդ են նշանակում), ինչպես՝ աղեյր, ջարդ, նախճիր, Մեծ Ոճիր, Մեծ Եղեռն, հայասպանություն, հայասպանդ, արեւմտ. Հայկական Տաւնհինգը եւ այլն: Կառուցվածքային ակնհայտ տարբերությունից բացի (բառ եւ բառակապակցություն), սրանք ստեղծման տարբեր պատմություն եւ ժամանակագրություն ունեն, տարբերակվում են ըստ իմաստի եւ ոճական արժեքի, գործածության հաճա-

խականությունը, տերմինային եւ ոչ տերմինային արժեքներով, տարբեր են իրենց արտահայտչականությունը, զգայական ազդեցությունը, առաջացրած մտային զուգորդումներով:

Մենք քննության առարկա ենք դարձրել վերոհիշյալ միավորներից մեկը՝ հայաստանություն բառը, որն այսօր ցեղասպանագիտական տերմինի արժեք ունի:

Հասկացությունն ահա թե ինչպես է մեկնաբանված հայկական ամենահեղինակավոր հանրագիտարանում. «Հայաստանություն, արմենոցիդ, պատմության մեջ ցեղասպանության (գենոցիդի)¹ դրսևորումներից: Գործադրել են տարբեր ժամանակներում օսմանյան Թուրքիայի կառավարող շրջանները՝ Արեւմտյան Հայաստանի եւ Թուրքիայի զանազան վայրերում, խաղաղ հայ բնակչության նկատմամբ»²: Այնուհետեւ անդրադարձ է կատարվում ցեղասպանագիտական այդ տերմինի ստեղծման ժամանակին եւ հեղինակին: Ասվում է. «Հայաստանություն տերմինն առաջին անգամ գիտական շրջանառության մեջ է դրվել 1967-ի հուլիսին, Փարիզում կայացած՝ ոճրի կանխարգելման միջազգային 2-րդ համագումարում, ուր քննվեց նաեւ հայկական Մեծ Եղեռնը: Արաբ (լիբանանցի) իրավագետ Մետր Մուսա Պրենսը համագումարին ներկայացրած զեկուցման մեջ հայերի կոտորածը կոչեց հայաստանություն («արմենոցիդ») եւ այն որակեց «ցեղասպանությունների հայր»³:

Հայկական այլ հանրագիտարաններ այս գիտաբառը հիշատակում են հիմնականում վերելում ասվածին առնչվող խոսքաշարերում:

«Հայ Սփյուռք» հանրագիտարանը, ներկայացնելով հայագիտությունը Լիբանանում, վերոհիշյալին ավելացնում է, որ Մուսա Պրենսը նույն տեսակետը հիմնավորել է իր կնոջ՝ Մարի-Անժ Պրենսի գործակցությամբ գրված «Անպատիժ մի ցեղասպանություն. Հայաստանությունը մարդկության դեմ գործված ոճիրների ոլորտում» Ֆրանսերեն գրքում (1967 թ., ընդարձակ տարբերակը՝ 1975-ին եւ 1988-ին. այն Պրենսի «Ցեղասպանու-

¹ Այս տերմինի հեղինակը լեհական հրեա, իրավագետ Ռ. Լեմկինն է (1944-ին): Կա նաեւ *էթնոցիդ* (ethnocide), որն ավելի շատ գործածվում է «մշակութային ցեղասպանություն» կամ «ազգային ինքնությունը վերացնելու քաղաքականություն» նշանակություններով: Համեմատենք ցեղասպանությունն անվանող հիմնական տերմինը եւ հայերի ցեղասպանությունն անվանող օտար տերմինը. *գենոցիդ* (հուն. γένος «տոհմ, ցեղ», լատ. caedere բռն. «ցեղի, տեսակի ոչնչացում») (Словарь иностранных слов, Москва, 1986, էջ 118) եւ *արմենոցիդ* (օտարները հայերին հաճախ անվանում են armen-, իսկ երկրորդ բաղադրիչը նույնն է): Ակնհայտ է, որ երկրորդը համաբանության արդյունք է:

² «Հայկական սովետական հանրագիտարան», հ. 6, Երևան, 1980, էջ 134:

³ Նույն տեղում:

թյունը կամ կանխամտածված, հավաքական ջարդերի արդի ծավալները» հինգհատորյակի երկրորդ հատորն է. համառոտ տարբերակը (1967-ի) հայերեն հրատարակվել է 1969-ին եւ 1987-ին)⁴:

«Հայկական հարց» հանրագիտարանի «Հայկական հարցը եւ հայերի ցեղասպանությունը պատմագրության մեջ» բառահոգովածում արաբական պատմագրությանն անդրադառնալիս հիշատակվում է Մ. Պրենսի «Հայասպանություն» գիրքը եւ նշվում, որ «Մոսկա Պրենսը 1894-96-ի իրադարձությունները համարում է հայասպանության քաղաքականության սկիզբ», որ Պրենսը «գիտական շրջանառության մեջ դրեց «Հայասպանություն», «ամենացեղասպան ցեղասպանություն» արտահայտությունները եւ ափսոսում է, որ մինչեւ օրս «Հայասպանությունը չունի իր նյութները»⁵:

Մեկ գործածություն էլ տեսնում ենք մեծ հայասեր Ֆ. Նանսենին նվիրված բառահոգովածում. «1927-ին նորվեգ. հրապարակվել է նրա «Հայասպանում» ծավալուն գիրքը... գերմ.՝ «Խաբված ժողովուրդը» վերադրությամբ, որտեղ հեղինակը մեղադրել է հայասպանության հանցավորներին»⁶: Սա վկայություն է այն բանի, որ բառն արդեն ընդունված է եղել: Հայասպանություն-ն ըստ էության հայոց (հայերի) հայկական ցեղասպանություն բաղադրյալ անվանման իմաստի արտահայտիչն է:

Հանրագիտարանային վերոշարադրյալ տեղեկություններից կարող ենք եզրակացնել, որ հայասպանություն բառը հայոց լեզվի բառապաշարում հայտնվել է Ի. դարի 60-ականներից՝ որպես Armenocide / արմենոցիդ-ի համարժեք⁷:

⁴ «Հայ Սփյուռք» հանրագիտարան, Երևան, 2003, էջ 312-313 (բառահոգովածի հեղինակ՝ Ա. Սանջյան): Հմմտ. Moussa Prince avec la collaboration de Marie-Ange. Un génocide impuni: L'Armenocide. (Dans le cadre des crimes contre l'humanité). Introduction, Heidelberg, 1967, Մ. Բրենս, Անպատիժ ցեղասպանություն մը: Հայասպանությունը: Թարգմ.՝ Տիգրան Ոսկունի, Բեյրութ, 1969: Ի դեպ, իրավագետի ազգանունը հայերեն հանդիպում է երեք տարբերակով. արեւելահայերենում հիմնականում՝ Պրենս, արեւմտահայերենում՝ Բրենս, Փրենս:

⁵ «Հայկական հարց» հանրագիտարան, Երևան, 1996, էջ 274-275 (բառահոգովածի հեղինակ՝ Ն. Հովհաննիսյան): Այստեղ հայասպանություն կամ armenocide/արմենոցիդ բառահոգոված չկա, թեպետ, մեր կարծիքով, կարող էր լինել, քանի որ անմիջականորեն առնչվում է հանրագիտարանի թեմատիկային:

⁶ «Հայկական հարց» հանրագիտարան, էջ 353:

⁷ Հմմտ. «1960-ական թվականներից պատմագիտական գրականության մեջ «Հայոց ցեղասպանություն» դեֆինիցիային զուգահեռ սկսեց կիրառվել նաև «Արմենոցիդ» եզրը, որի համար պարսկական ենք լիբանանցի արաբ պարսկական Մուսա Պրենսին» (տես Ն. Հովհաննիսյան, Արմենոցիդը ճանաչված ցեղասպանություն է, Երևան, 2010, էջ 34-34):

Այժմ անդրադառնանք հայաստանություն բառի ստեղծման ժամանակին, հեղինակին եւ հանգամանքներին (փորձելով ճշգրտումներ մտցնել), տերմինային արժեքին, իմաստային կառուցվածքին, գործածությունն առանձնահատկություններին եւ բառարանային մշակմանը, ինչպես նաեւ բառի կազմության հիմքերին, այլ բառերի հետ ունեցած կապերին:

Սկսենք նրանից, որ հայաստանություն բառի բառակազմական հիմքը՝ հայաստան ածականը, հայերեն խոսքում տասնամյակների «կենսագրություն» ուներ, երբ ստեղծվեց քննարկման առարկա ցեղասպանազիտական տերմինը:

Մեր պրպտումներից պարզվեց, որ հայաստան բառը գործածվել է տակավին հետեղեռնյան շրջանից՝ 20-րդ դարի տասական թվականներից սկսած, մասնավորապես գրական արեւմտահայերենում: Այսպես. «Իթթի-հասրականներու համախալամական քաղաքականութիւնը եւ 1915ի հայաստան եղեռնին գաղտնիքը»⁸: Այդպես էլ հետագա տարիներին, ինչպես՝ «Մասնատր պաշտօնեաներ Հալէպ կը դրկուէին այն հայաստան ծրագրին իրականացման համար»⁹: 20-ական թվականներին բառը գոյականաբար գործածված ենք տեսնում նաեւ արեւելահայերենում. «...նրանց դնելով Արդիւ-Համիդների, Թալեաթ-Էնվերների, Լորանով-Ռոստովսկիների, Նիկոլայ Երկրորդների, Չեմբերլէնների et tutti quanti, ուրիշ հայաստանների հետ միասին...»¹⁰:

Այսպիսով՝ հայաստանություն բառի ածական հիմքը՝ հայաստան-ը, ունենիք¹¹, նրան ավելացվել է -ություն գոյականակերտ վերջածանցը, բառակազմական մի քայլ, որ սովորական է հայերենի բառակազմության մեջ:

⁸ «Հայ աշխարհ», գրականագիտական եւ հասարակագիտական շաբաթաթերթ, Կ. Պոլիս, Ա. տարի [1919], թիւ 1, 14/27 Յնվր, էջ 3 (վերնագիր): Պոլսական թերթում նման բառակապակցության գործածությունն այնքան էլ զարմանալի չէ. 1918 թ. դեկտեմբերի 16-ին Թուրքիայում ստեղծվեցին հարցաքննիչ հանձնաժողովներ, նշանակվեցին պետական մեղադրողներ՝ երիտթուրքական կառավարության ղեկավարների եւ «Միություն եւ առաջադիմություն» կուսակցության պարագլուխների նկատմամբ դատավարություն սկսելու համար. գլխավոր խնդիրը հայկական ջարդերին վերաբերող հանցանշաններ, ապացույցներ եւ վկայություններ հավաքելն էր:

⁹ Ա. Անտոնեան, Մեծ ոճիրը, Հայկական վերջին կոտորածները եւ Թալեաթ փաշա, Բոստոն, 1921, էջ 29 (լուսապատճենմամբ հրատարակվել է նաեւ 1990-ին Երեւանում):

¹⁰ Լեօ, Թիրքահայ յեղափոխութեան գաղափարաբանութիւնը, Կ. Ա., Փարիզ, 1934, էջ 4 (լուսապատճենմամբ վերահրատարակությունը՝ Երեւան, 1994): Արձանագրել ենք նաեւ ավելի ուշ շրջանի գոյականաբար գործածություններ՝ արեւմտ. «Գերմանիոյ տիրահոշակ դեսպանը, Վանկենհայմ, որ բացորոշ կերպով քաջալերեց իթթիհասրական հայաստանները» (տե՛ս Յուշանատեան Մեծ Եղեռնի, Բեյրութ, 1965, էջ 278) եւ արեւել. «... համարելով դրանք ողբերգություն, իսկ նրա ոգեշնչողներին՝ արկածախնդիրներ, հայաստաններ» (տե՛ս Ծ. Ռ. Հարությունյան, Սովետահայ պատմագրությունը 1920-ական թվականներին, ՏՀԳ, Կ. 3, 1963, էջ 11):

¹¹ Մի բառարանում հայաստան-ը շիրազյան մեկ գործածության հիման վրա թյուրիմացա-

Հայաստանություն բառի ստեղծման հիմքեր հայոց լեզվում կային այլ առումով եւս: Դիտարկենք դրանք:

Մեզ թվում է, որ բառի ստեղծման գործում կարեւոր դեր է խաղացել համաբանության (կամ նմանակության) օրենքը: Չպիտի անտեսենք այն փաստը, որ տակավին ժԹ. դարի կեսերից հայերենում գործածվել է քննարկվող բառի հետ ձեւաիմաստային ակնհայտ ընդհանրություններ ունեցող ազգասպանություն-ը: Այսպես. «...հանցավոր են լինում ազգի առջես, եւ այս հանցանքի գաղափարը միմիայն կարող է բացատրել այս զարհուրելի բառը՝ ազգասպանություն»¹² (Մ. Նալբանդյան, Հիշատակարան, 1860 թ.): Ավելի ուշ՝ «Մի՞թե սա պատերազմ չէ, պատերազմ հոգեմեղման, լեզվակալության, ազգասպանության...» (Ղ. Աղայան, «Թեմական տեսուչ», 1881 թ.)¹³:

Ազգասպանություն - հայասպանություն զուգահեռը կարեւոր է թե՛ կառուցվածքային եւ թե՛ իմաստային տեսանկյուններից: Իրենց կազմում հայ բաղադրիչն ունեցող բառերում նման այլ զուգահեռներ եւս կարող ենք մատնանշել: Այսպես՝ ազգապարտում - հայապարտում, ազգահալաք - հայահալաք¹⁴ եւ այլն:

Հայասպանություն բառի ստեղծման անմիջական նախօրինակ կարող է դիտվել ցեղասպանություն տերմինը, որը ժամանակագրական առումով ազգասպանություն-ից շուրջ հարյուր տարի անց է կազմվել: Ծիշտ այդպես էլ գենոցիդի-ի համաբանությամբ ստեղծվել է արմենոցիդ-ը: Այստեղ գործ ունենք մի կողմից համաբանության, մյուս կողմից՝ բառապատճենման հետ. օտար բառի հայերեն համարժեքը լիովին համապատասխանում է հայոց լեզվի բառակազմական օրինաչափություններին:

Եւ, իհարկե, հարկավոր է համեմատել նման կառուցվածք ունեցող գրաբարյան մի շարք բառերի հետ, ինչպես՝ անձնասպանություն, եղբայ-

բար նոր է համարվել (տե՛ս Փ. Գ. Մեյթիխանյան, Նոր բառերի բացատրական բառարան, Երևան, 1996, էջ 107): Բառարանագիրը չի ստուգել եւ պարզել, որ հայասպան-ը ոչ միայն գործածության մեջ է եղել, ինչպես ցույց տվեցինք բնագրային օրինակներով, այլև վաղուց ի վեր քանիցս արձանագրվել է հայերեն մի շարք կարեւոր բառարաններում: Այսպես՝ Պետրոս վրդ. Ճիզմեճեան, Հայերէն աշխարհաբար լեզուի լիակատար բառարան, հ. 2, Հալեպ, 1957, էջ 794, Արտ. Տէր Խաչատուրեան, Հ. Գանգրունի, Փ. Կ. Տօնիկեան, Հայոց լեզուի նոր բառարան, Բեյրութ, 1968, էջ 407, Գնել արք. Ճերեճեան, Փարամազ Կ. Տօնիկեան, Հայոց լեզուի նոր բառարան, հ. 1, Բեյրութ, 1992, էջ 1137:

¹² Տե՛ս Մ. Նալբանդյան, Երկեր, Երևան, 1985, էջ 393: Ընդգծումը Նալբանդյանինն է:

¹³ Ղ. Աղայան, Երկերի ժողովածու չորս հատորով, հ. 1, Երևան, 1962, էջ 244: Ընդգծումը մերն է:

¹⁴ Այս բառի մասին տե՛ս Դ. Գյուրջիսյան, «Հայահալաք(ում)». հասկացությունը եւ բառային դրսևորումները», «Էջմիածին» հանդես, 2016, Բ.:

րասպանություն, հայրասպանություն, մանկասպանություն, մարդասպանություն¹⁵: Սա հստակ ցույց է տալիս, որ «այսինչասպանություն» կամ «անձնանիչ գոյական+սպանություն» բառակազմական մասնակաղապարը գրաբարում լավ յուրացված էր: Բաղադրությունների առաջին բաղադրիչները մարդ, անհատ նշանակող բառեր են (մարդ եւ անձ), որոնք այդ իմաստն արտահայտում են ընդհանուր ձեւով, ինչպես նաեւ ազգակցական կապ կամ տարիք նշանակող բառեր (հայր, եղբայր եւ մանուկ): Նկատենք նաեւ, որ այս բառերից եւ ոչ մեկի առաջին բաղադրիչը որեւէ ազգ, ժողովուրդ նշանակող բառ չէ:

Ամբողջ հայերենի ընդգրկմամբ հայասպանություն-ն իր տեսակի մեջ (երբ բաղադրությունն առաջին բաղադրիչն ազգ, ժողովուրդ նշանակող բառ է) միակը չէ: Տակավին Ի. դարի սկզբին լույս է տեսել Շահրիարի (Համբարձում Առաքելյան) «Ջհուդ-Քուչան (Հրեասպանություն¹⁶), վէպ Պարսկաստանի կեանքից» գիրքը (արտատպված «Մուրճ» ամսագրից, Թիֆլիս, 1902): Այս գրքի մասին «Լումայի» գրախոսականում գրված է. «Պ. Շահրիարի գրքոյկը կրում է Զիուդ-Քուչան, այսինքն հրեասպանություն վերնագիրը, բայց հրեաների դրությունը Պարսկաստանում նրա մէջ շատ քիչ տեղ է տրուած: Հրեասպանութիւնը կատարում է գրքոյկի վերջում¹⁷: Նշանակում է՝ հայերենի բառակազմությունը տվել էր մեզ հետաքրքրող բառի՝ հայասպանության անմիջական նախորինակը: Ի դեպ, հրեասպանություն բառը հայերենի բառարաններում արձանագրված չէ, թեպետ հետագայում եղել են այլ գործածություններ եւս:

Հասկանալի է, թե ինչու են ազգություն նշանակող առաջին բաղադրիչով հայերենում հենց այս բառերը կազմվել (հայասպանություն եւ հրեասպանություն, համառ. Armenocide եւ Judocide): Աշխարհի հնագույն ժողովուրդներից այս երկուսն իրենց ողջ պատմության ընթացքում հաճախ են հալածանքների, ջարդերի եւ կոտորածների ենթարկվել: Այս բառերը նշված իրադարձությունների նշանակիչներ են դարձել: Ի. դարում հենց հայերի եւ հրեաների նկատմամբ են իրականացվել մարդկությունը հայտնի ահավոր եւ ամենից ընդգրկուն ցեղասպանությունները: Բոլորովին պատահական չէ, որ այս երկու բառերը երբեմն հանդես են գալիս նույն համատեքստում, ինչպես՝ «...սիրիի փորձենք զուգահեռ մը կազմել մեր դա-

¹⁵ Տե՛ս ՆԲՀ, Վենետիկ, 1836-1837, հ. Ա., էջք 194, 653, հ. Բ, էջք 34, 205, 222:

¹⁶ Պարսկերեն բառի պատճենում-համարժեքն է:

¹⁷ «Լումայ» գրական հանդես, Տիֆլիս, 1903, գ. 1 (յուն.-փետր.), էջ 237:

րուն երկու մեծ ցեղասպանության՝ Հայաստանության և Հրեաստանության միջև¹⁸»:

Ձեռախմաստային տեսանկյունից հայաստանություն-ը որոշակիորեն աղերսվում է ազգասպանություն, ցեղասպանություն և ժողովրդասպանություն¹⁹ բառերին, որոնք այդ նույն հասկացություն (ազգի, ցեղի, ժողովրդի) ընդհանուր՝ չտարորոշված գաղափարն են արտահայտում:

Հայաստանություն բառի կազմություն և գործածություն պատմությունը հստակեցնելու համար անդրադառնանք ամենաուշագրավ իրողություններից մեկին:

Հայաստանություն բառի ստեղծման ժամանակը (թերեւս նաեւ հեղինակի հարցը) ճշգրտելու համար խիստ կարեւոր է հետեւյալ փաստը, որ ցայսօր անուշադրություն է մատնվել: 1964-ին Նյու Յորքում լույս է տեսել ամերիկահայ պրոֆ. Մանասե Կ. Սեւակի «Հայկական Մեծ Եղեռներ և մենք (թրքական հայաստանություն) (Turkish Armenocide)»²⁰ գրքուկը: Այստեղ կարդում ենք. «Թուրքերը երկրորդ ուժի մը եւս կը գործեն, այսինքն՝ հայաստանությունը ֆիզիքապէս իրականացնելէ յետոյ Թրքահայաստանի սահմաններուն մէջ...», «...Իթթիհապականները կամ Երիւրասարդ Թուրքերը ժողով մը գումարած են եւ հոն Տորթ. Այսինչը ճառ մը խօսելով՝ ուրուագծած է Հայաստանութեան ծրագիրը», «Հայաստանության մեծ ողբերգությունները տեղի ունեցաւ ասկէ 49 տարիներ առաջ», «Գերմանիա հանդիսացաւ Թուրքիոյ պաշտպանը եւ մեղսակից եղաւ Թուրքիոյ կողմէ ծրագրուած հայաստանութեան», «...պարտաւորել եւ մեծաքանակ թիով լոյս ընծայել՝ Թուրք եւ Գերման կառավարություններու մեղսակցութեան արդիւնքն եղող Հայաստանութեան վաւերագրական պատմությունը»²¹:

¹⁸ Մ. Բրենս, Անպատիժ ցեղասպանություն մը: Հայաստանությունը, Պեյրութ, 1969, էջ 82:

¹⁹ Հմմտ. «Տակափն տասնեփնց յօղուած ունի ՄԱԿի այս ուխտը ...չորս յօղուածները կը բաւեն՝ ճշդելու ու բնորոշելու համար ՅԵՂԱՍՏԱՆԻՌԵԱՆ ԿԱՄ ԺՈՂՈՎՐԴԱՍՏԱՆԻՌԵԱՆ ՅԱՆՅԱՆՔԸ ԵՒ ՊԱՏԻՇԸ» («Յուշամատենան Մեծ Եղեռնի», էջ 1100) (գլխագրերով գատումը մերը չէ - Դ. Գ.):

²⁰ Armenocide բառի մեկ այլ գործածություն էլ կարող ենք հիշատակել: Ա. Աստույանի «Մեծ Ոճիր» գրքի անգլերեն թարգմանության երկրորդ հրատարակությունը նույն 1964-ին լույս է տեսել այսպիսի վերնագրով՝ «The Genocide of the Armenians by Turks» (The Turkish Armenocide) (հրատարակվել է հավանաբար Ֆիլադելֆիայում. տե՛ս «Յուշամատենան Մեծ Եղեռնի», Բեյրութ, 1965, էջ 222):

²¹ Մ. Կ. Սեւակ, Հայկական Մեծ Եղեռնը եւ մենք (թրքական հայաստանություն) (Turkish Armenocide), Նյու Յորք, 1964, էջ 4, 5, 6, 14, 19: Ի դեպ, այստեղ քանիցս հանդիպում են նաեւ ազգասպան եւ ցեղասպան բառերը. «Երեկի ազգասպան եւ ոճրագործ թուրքը այսօր անցած է «քաղաքակրթուած» ազգերու շարքին...», «Գերման կրօնականները մոռցան Բրիտանիոյ սիրոյ վարդապետութիւնը եւ քարոզեցին ցեղասպան Թուրքիան...» (էջ 10):

Նույն հեղինակը՝ Մանասե Կ. Սեւակը, «Գերման-թուրք եղբայրակցութեան դաւադրութիւնը եւ հայաստանութեան ներքին ծալքերը» վերնագրով մի նյութ էլ հրապարակել է 1965-ի բեյրության հայտնի «Յուշամատեան»-ում²²:

Այսպիսով՝ հայաստանությունը բառի պատմութեան մեջ կարող ենք կարեւոր ճշգրտում անել. որպէս բառային միավոր՝ բառույթ, հայերենում (գրական արեւմտահայերենում) այն գործածութեան մեջ է եղել առնվազն 1964-ից, եւ գործածությունները կապվում են Մանասե Կ. Սեւակի անվանը: Առայժմ սրանք են մեզ հայտնի առաջին վկայությունները: Իսկ տերմինի արժեքով գործածութեան սկիզբը պետք է համարել թերեւս 1967-1969 թվականները, երբ Մ. Պրենսը Armenocide-ը սահմանեց իբրեւ իրավական-ցեղասպանագիտական բովանդակություն ունեցող գիտաբան ու միջազգային գիտական շրջանառութեան մեջ դրեց, եւ այն «հայերենացվեց» (կամ, ավելի ճիշտ, գտնվեց նրա համարժեքը):

Հարկ է հատուկ նշել, որ Մ. Պրենսն ինքը որոշակի վերապահում ունի Armenocide-ի ստեղծման հեղինակի հարցում: Նա նշում է. «Պիրի քնննք այս ցեղասպանությունը, զոր կոչեցինք «Հայաստանություն», առանց տեղեակ ըլլալու, թէ այս բացատրությունը մեզմէ առաջ գործածուած է թէ ոչ²³»: Ակնհայտ է, որ լիբանանցի իրավագետը Armenocide-ի ստեղծումը վստահաբար իրեն չի վերագրում: Բառի գործածութեան ավելի վաղ օրինակներ մենք մատնանշեցինք. լեզվական ակնհայտ փաստերը հնարավոր չէ շրջանցել:

Այստեղ խնդիրն այլ կերպ պիտի լուծել: Հնարավոր է, որ բառն արդեն գոյություն ուներ. Մ. Պրենսն ուղղակի բառին տերմինային արժեք հաղորդեց եւ ցեղասպանագիտական-իրավական տերմինի արժեքով միջազգային գիտական շրջանառութեան մեջ դրեց: Դրանից հետո Armenocide-ի հայերեն համարժեքը՝ հայաստանություն-ը, սկսեց կիրառվել նաեւ ցեղասպանագիտական տերմինի արժեքով²⁴:

Այժմ պարզեմք, թե հայաստանություն-ն ինչպե՛ս է ներկայացվել հայոց լեզվի բառարաններում:

Հայաստանությունը բառի նկատմամբ հայ բառարանագիրները զարմանալի անուշադրություն են ցուցաբերել. այս բառը, կարելի է ասել, ուղղակի անտեսվել է: Հայաստանությունը բառահոգոված չունեն արեւելահայ-

²² Տե՛ս Յուշամատեան Մեծ Եղեռնի, էջ 265:

²³ Մ. Բրենս, նշվ. աշխ., էջ 18:

²⁴ Հազվադեպ որպէս Armenocide-ի համարժեք կիրառվում է նաեւ հայաստանդ բառը:

յերենի ընդարձակ բացատրական բառարանները, այն չի արձանագրվել նաեւ ամենաընդգրկուն ուղղագրական բառարանում²⁵:

Հոմանիշների հայտնի բառարանները եւս չունեն հայաստանություն գլխաբառ, այն չենք գտնում նաեւ եղեռն եւ ցեղասպանություն բառերի հոմանիշների մեջ²⁶, երբ հոմանշութունն ակնհայտ է. ցեղասպանություն եւ հայաստանություն բառերի մեջ գործում է ընդհանուրի եւ մասնավորի հարաբերություն²⁷: Հմմտ. «Հայաստանությունը՝ մշակութային ցեղասպանության համարեքարում»²⁸, *ինչպես նաեւ* «...նա ներկայացրեց իր «Ցեղասպանություն, հայաստանություն, ողջակիզում» խորագրով սկավառակը»²⁹: Ուստի հոմանիշների բառարանները հետագայում պետք է լրացնեն այս բացը:

Հայաստանութիւն բառը չունեն գրական արեւմտահայերենի բառարանները³⁰ եւս, այն դեպքում, երբ արեւմտահայերեն գրքեր են լույս տեսել հայաստանութիւն բաղադրիչն ունեցող վերնագրերով: Մանասե Կ. Սեւակի «Հայկական Մեծ Եղեռնը եւ մենք (թրքական հայաստանութիւն) (Turkish Armenocide)» եւ Մուսա Պրենսի «Անպատիժ ցեղասպանութիւն մը: Հայաստանութիւնը» արդեն հիշատակված գրքույկներից բացի հրատարակվել են ստվար (եւ կարեւոր) հատորներ՝ «Հայաստանութիւնը եւ Ամերիկեան Քոնկրէսը» (Բեյրութ, 1978) եւ «Եոզղատի Հայաստանութեան Վաւերագրական Պատմութիւնը» (պատրաստեց՝ Գրիկէր, Նյու Յորք, 1980): Էլ չենք խոսում գրանցում եւ այլուր հանդիպող բազում գործածությունների մասին, *ինչպես*՝ «1878ի Պերլինի հռչակաւոր դաշնագիրը, իր ոգիով, արդէն իսկ կը նախատեսէր Հայաստանութիւնը», «Հայաստանութեան կապակցութեամբ Նիւրենպերկ պիտի չըլլար...»³¹ *կամ* «Եոզղապ գաւառի հայաստանութեան պարսախանայրունները դարող Թուրք Պարեւազմական

²⁵ ԺՀԼԲԲ, հ. 3, Երեւան, 1974, ԱՀԲԲ, Երեւան, 1976: ՀՈՒՈՒՏԲ, Երեւան, 1973 (այս բառարանները չունեն նաեւ հայաստան անվանումը):

²⁶ Ա. Սուրիսայան, Հայոց լեզվի հոմանիշների բացատրական բառարան, Երեւան, 2003: Կան հայաստան/հայասպառ-ը՝ իբրեւ հայաջինջ-ի հոմանիշ (էջ 252):

²⁷ Ուշագրավ է (եւ միանգամայն ճիշտ), որ «Հայկական սովետական հանրապետարանում» ցեղասպանություն բառափոխվածից հղում է արվում հայաստանություն հոդվածին (հ. 12, Երեւան, 1986, էջ 149):

²⁸ ՎԷՄ, 2010, թիվ 2 (30), էջ 102 (Ա. Հովհաննիսյանի հոդվածի վերնագիրն է):

²⁹ www.ysu.am/news/hy/rGj6fVkyxN3T8PpLTdyIaoVd3G:

³⁰ Գ. արք. Զերեմեան, Փ. Կ. Տոնիկեան, Հայոց լեզուի նոր բառարան, հ. 1 (ունի միայն հայաստան, որից հղում է արվում հայակեր-ին. էջ 1137), Անդրանիկ վրդ. Կոսեյան, Բաղգիրք հայերէն լեզուի, Բեյրութ, 1998:

³¹ Մ. Բրենս, նշվ. աշխ., էջ 64, 65:

Արեւանը ունեցաւ 18 նիստեր...», «...եղելութիւններ հայասպանութեան վերաբերեալ դիմաւորական վաւերագրերու մասին»³²:

Բառարանագիրները պետք է հաշվի առնեն (այսուհետ թերեւս հաշվի կ'առնեն) լեզվական ակնհայտ փաստերը:

Հայասպանություն-ն իբրեւ գլխաբառ տեղմին փաստորեն առկա է միայն հայկական սովետական հանրագիտարանում³³:

Բանասիրական բառարաններից հայասպանություն-ը հանդիպում է միայն նորաբանությունների բառարանում՝ «Հայերին սպանելը, նրանց հանդեպ սպանդ՝ կոտորած անելը» բացատրությունում եւ բնագրային օրինակով. «Ադրբեջանական ժողովարի պարագլուխները Բաքվում կազմակերպած դաժան հայասպանությամբ համահավասարվեցին քեմալականներին, իթթիհապականներին եւ մուսավթականներին» («Հայրենիքի ձայն», 7.2.1990)³⁴: Սա, անշուշտ, դրական փաստ է, միայն թե պիտի արձանագրենք, որ բառը վաղուց արդեն նորաբանություն է³⁵:

Հայերեն բառարաններից հայասպանություն բառի բացակայությունը առնվազն տարօրինակ է: Հայերս պահանջում ենք ցեղասպանություն միջազգային ճանաչում եւ հատուցում, սակայն ցայսօր թարգմանական բառարաններում չենք գետեղել Armenocide գիտաբառը եւ նրա համարժեքը՝ հայասպանություն-ը: Սրանք բացակայում են Հայաստանյան եւ սփյուռքյան ֆրանսերեն-հայերեն, հայերեն-ֆրանսերեն³⁶, անգլերեն-հայերեն, հայերեն-անգլերեն³⁷, հայ-ռուսերեն³⁸, ռուս-հայերեն³⁹ եւ երկլեզվ-

³² «Եռզդատի հայասպանութեան վաւերագրական պատմութիւնը», էջ 66, 71:

³³ «Հայկական համառոտ հանրագիտարանում» հայասպանություն բառահոգված չկա, թերեւս այն պատճառով, որ համառոտ է:

³⁴ Ս. Էլոյան, Արդի հայերենի նորաբանությունների բառարան, Երեւան, 2002, էջ 274:

³⁵ Միեւնոյն ժամանակ, սակայն, պիտի փաստենք, որ ոչ հայասպան-ը, ոչ էլ հայասպանություն-ը արեւելահայերենում այդ շրջանում դեռ լայն գործածություն չունեն. ԱՐԵՒԱԿ-ում (Արեւելահայերենի ազգային կորպուս. www.eanc.net) այն չի հանդիպում: Սա չի նշանակում, թե բառը չի գործածվել, այլ որ կորպուսը տարատեսակ բնագրերով հարստացվելու կարիք ունի:

³⁶ Տեն Ա. Բարլեզիզյան, Հայերեն-ֆրանսերեն բառարան, Երեւան, 2009, Մ. Կարապետյան, Ֆրանսերեն-հայերեն հասարակական-քաղաքական բառարան, Երեւան, 2012 եւ այլն:

³⁷ Տեն Հ. Ա. Ամանգուլյան, Մ. Բ. Հովհաննիսյան, Անգլերեն-հայերեն բառարան, Երեւան, 1984, Ն. Ռ. Բարաթյան, Հայերեն-անգլերեն բառարան, Երեւան, 2002, Ն. Ռ. Բարաթյան, Անգլերեն-հայերեն բառարան, Երեւան, 2011 եւ այլն:

³⁸ Տեն, օրինակ, Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ, Հայ-ռուսերեն բառարան, Երեւան, 1984:

³⁹ Հմմտ. Муса Пренс квалифицирует геноцид как “преступление против человечества”, он ввел в научный оборот термин “арменоцид”: Он сожалеет, что до сих пор “у арменоида не было своего Нюрнберга” (Армянский вопрос. Энциклопедия, Ереван, 1991,

յան մյուս ընդարձակ տպագիր բառարաններից: Ավելին, այն բացակայում է նաև ԵՊՀ Հայագիտական հետազոտությունների ինստիտուտի առցանց «Հայոց ցեղասպանության հանրագիտարանում»⁴⁰: Սա գրեթե նույնն է, որ այլալեզու բառարանները (տպագիր կամ էլեկտրոնային) անտեսեն Genocide/գենոցիդ կամ Holocaust/Հոլոքոստ «Ողջակիզում» բառերը:

Բառարանային թերացումը պետք է վերացնել, հատկապես որ վերջին չըջանում աշխուժացել է հայաստանություն բառի գործածությունը նաև զրական արեւելահայերենում, մասնավորապես զրավոր (գիտական եւ հրապարակախոսական) խոսքում: Օրինակներ՝ «Թուրքիայի հիմնադիր Մուսթաֆա Բեմալը... եւս օգրվում էր հայաստանության մեջ ակրիվորեն ներգրավված գործիչների ծառայություններից», «...ռուսական մամուլը միշտ նշում է, թե այդ սպանությունները ողբերգական պատահականություն էին, սակայն պետք է հաշվի առնել այն փաստը, որ Ադրբեջանը փարինը շարունակ պետական մակարդակով հայաստանություն է քարոզում: Ադրբեջան պետության համար հայ սպանելը հերոսություն է»⁴¹: Սա իրողություն է՝ անկախ նրանից, թե ի՛նչ արժեքով է այն կիրառվում՝ տերմինային, թե ոչ:

Հարկավոր է նկատի ունենալ, որ հայաստանություն բառը գործածվում է ինչպես տերմինային, այնպես էլ ոչ տերմինային արժեքով: Դիտարկենք բնագրային հետեւյալ օրինակները, որոնցում բառը գործածվել է ոչ տերմինային նշանակությամբ. «Ռուսաստանն ու Վրաստանը կարծես թե «մրցակցում» են հայաստանության գործում: Հայկական մամուլը չի հասցնում գրել այս երկրներում հայերի սպանությունների բոթը», «Ադրբեջանում հայաստանությունը դե ֆակտո հանցանք չէ» (խոսքը Բուդապեշտում Հայ սպա Գ. Մարգարյանին սպանած Ռ. Սաֆարովի մասին է)⁴²: Այստեղ խոսվում է առանձին հայի կամ հայ անհատների, բայց ոչ հավաքականության ծրագրված սպանության/սպանդի մասին, որը համապատասխանում է ցեղասպանության հատկանիշներին: Ըստ էության՝ գործ ունենք բառի մաստի նեղացման հետ:

с. 57): Массовой экстерминации и депортации более чем полутора миллионов армян в Османской Турции в 1915-1923 гг. просвещенное человечество дало страшное название - "арменоцид" (А. Джилаван, "Арменоцид" на политическом кону - "Независимая газета" (Москва), 24.02.2000):

⁴⁰ 2016 թ. մարտի 7-ի դրությամբ: Տե՛ս www.armeniansgenocide.am:

⁴¹ Ա. Անանյան, Հայոց ցեղասպանությունը հայ-թուրքական երկխոսության հարցի համատեքստում, Հայոց ցեղասպանություն. արդի խնդիրներ, թ. 9, Երևան, 2004, էջ 18: www.panorama.am/am/news/2010/10/26/golos/1038396:

⁴² Տե՛ս www.hayary.org/wph/?p=228, <http://civilnet.am/2012/09/03/>:

Այս իմաստի պարզաբանման համար ուշագրավ է հայաստանի բառի հետեւյալ բացատրությունը՝ «Հայ մը կամ հայութիւնը սպաննելու ծրագիր ունեցող. հայաջինջ», որ գտնուում ենք սփյուռքյան հայտնի բառարաններից մեկում⁴³։ Իմաստային հիշյալ դրսեւորման հարցում փաստորեն զգալի դեր ունի բառակազմական հիմքի՝ հայաստան-ի ազդեցությունը, համտ. «Հայաստանութեան մոլուցքը»⁴⁴։

Թերեւս այս իմաստից խուսափելու միտումով եւս կարելի է բացատրել այն, որ մասնագետները երբեմն նախընտրում են միջազգայնորեն ընդունված օտար տերմինը՝ արմենոցիդ⁴⁵, կամ հայաստանություն-ը դնում են նրա կողքին՝ որպես պարզաբանում։ Այսպես, օրինակ, պրոֆ. Ն. Հովհաննիսյանը, որ հեղինակն է «Հայոց ցեղասպանություն. հայասպանություն՝ ամենացեղասպան ցեղասպանություն» աշխատության (Երեւան, 2009), հրատարակել է «Արմենոցիդը ճանաչված ցեղասպանություն է» վերնագրով գիրքը, որտեղ հայաստանություն տերմինը գործածված է մոտ տասն անգամ։ Բոլոր դեպքերում հայերեն բառը միջազգային տերմինի բացահայտիչն է, ինչպես՝ «...Հայերի նկատմամբ օսմանցիների կիրառած ոճ-րագործությունը կարելի է եւ պետք է կոչել «Արմենոցիդ»՝ «Հայաստանություն»», «Արմենոցիդի՝ Հայաստանության դեպքում երկուսի հասցեն էլ շարք հարակ է», կամ զուգադիրը՝ «Հիպոթեզ սխալվեց ոչ միայն պարերազմի հարցում, այլեւ Արմենոցիդ-Հայաստանությունը հիշելու հարցում»⁴⁶ եւ այլն։ Կամ էլ այսպես է պատահում՝ իբրեւ պարզաբանում. «Մուսա Բրենսը առաջինն էր, որ հայերի ցեղասպանությունն անվանեց արմենոցիդ (հայաստանություն), որը մնացել է անպարիժ»⁴⁷։

Հայտնի է, որ հայաստանություն գիտաբանն ստեղծվել է Թուրքիայի իրականացրած ոճրագործությունն անվանելու նպատակով։ Ուշագրավ

⁴³ Արտ. Տէր Խաչատուրեան, Հ. Գանգրունի, Փ. Կ. Տօնիկեան, Հայոց լեզուի նոր բառարան, էջ 407։

⁴⁴ Գ. Տ. Խրոյպեան, Յեղասպանագիտություն, Բեյրութ, 2006, էջ 312։ Սովորաբար այս գրքում սա խնդրո առարկա բառի եզակի կիրառություն է։

⁴⁵ Մի բառացանկում իբրեւ օտարաբանություն գետնովել է արմենոցիդ բառը, որի փոխարեն առաջարկվում են հայաստանություն եւ հայաջնջում հայերեն կազմությունները (Հ. Փալանդուցյան, Գործածական բառացանկ։ Օտարամուտ բառերի հայերեն համարժեքներ, Երեւան, 2013, էջ 15) (հմտ. Պետրոս վրդ. Ճիգմեճեան, Հայերեն աշխարհաբար լեզուի լիակատար բառարան, հ. 2, էջ 794), որտեղ հայաստան-ը բացատրվում է հայաջինջ բառով)։ Մեր կարծիքով՝ արդեն ընդունված տերմինի (հայաստանություն) կողքին հայաջնջում-ը նշելն ավելորդ է եւ տերմինային շփոթ կարող է առաջացնել։

⁴⁶ Ն. Հովհաննիսյան, Արմենոցիդը ճանաչված ցեղասպանություն է, Երեւան, 2010, էջ 39, 125, 173։

⁴⁷ Ս. Ս. Ստեփանյան, Հայոց ցեղասպանության ճանաչումից մինչեւ Հայկական հարցի արդարացի լուծում, ԼՀԳ, 2012, հ. 1, էջ 31։

է, որ ներկայումս այն գործածվում է նաեւ Ադրբեջանի ինչպես անցյալի, այնպես էլ այժմյան հակահայ եւ հայաստան քաղաքականութեան առնչութեամբ: Դիտարկենք բնագրային օրինակները. «1918-1920 թթ. Ադրբեջանում հայաստանության եւ էթնիկական զրուանների մասին գործը», «Ադրբեջանական պետական ֆաշիզմի ցեղասպանական ծրագրերին այսօր էլ կարելի է համարժեքորեն պարասխանել նրա դեմ իրավական հետապնդում սկսելով դատարանի դահլիճում նրան մերկացնելով հայաստանության մեջ, սկսած հայերի կոտորածներից... Բաքվում (1918 թ.) եւ Շուշիում (1920 թ.), մինչեւ էթնիկական զրուանները Նախիջեւանում (1918-1988 թթ.), Սումգայիթում, Կիրովաբադում, դարձյալ Բաքվում, դաշտային եւ լեռնային Ղարաբադում (1988-1994 թթ.)»⁴⁸:

Սա նշանակում է, որ տեղի է ունենում տերմինի ընդգրկման չըջանալի ընդլայնում, եւ հայաստանություն ասելով այսօր հասկանում ենք ոչ միայն 1894-ից Թուրքիայի սկսած եւ 1915-1923 իրականացրած ցեղասպանությունը, այլ նաեւ Ադրբեջանի (1918-1920 եւ 1988-1994): Պիտի արձանագրել նաեւ, որ մասնագիտական խոսույթից այս մոտեցումն անցել է զանգվածային լրատվական միջոցների լեզվին: Ահա մեկ վերնագիր՝ «Հայաստանությունն Ադրբեջանի պետական քաղաքականությունն է»⁴⁹:

Հայաստանություն -ը չի գործածվում պետական-պաշտոնական փաստաթղթերում⁵⁰: Դա կարելի է բացատրել այն հանգամանքով, որ Հայոց (Հայերի) ցեղասպանություն տերմինային բառակապակցությունը զուգահեռ հայաստանություն բառի գործածությունը կարող է չփոթ առաջացնել նույն երեւույթի անվանման հարցում:

Եզրակացություններ:

1. Հայաստանություն բառն ստեղծվել է 20-րդ դարի վաթսուհակաթվականներին գրական արեւմտահայերենում, այն Armenocide իրավական տերմինի համարժեքն է: Այժմ ընկալվում է իբրեւ համահայերենյան բառային միավոր:

2. Հայաստանություն բառի ստեղծման եւ տերմինային արժեքի ձեւավորման գործին առնչվում են պրոֆ. Մանասե Կ. Սեւակի եւ իրավագետ Մ. Պրենսի անունները:

⁴⁸ Ա. Այվազյան, «Հայկական հարցն այսօր» (www.ardarutyun.org/?p=3771 (ընդգծումները հրապարակման հեղինակինն են):

⁴⁹ www.panorama.am/am/news/2010/10/26/golos/1038396:

⁵⁰ Դա հատկապես նկատվեց 2015 թ. Հայաստանի Հանրապետությունում Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցը նշելու ընթացքում:

3. Հայաստանություն բառը կազմվել է 1915 թ. Հայոց Մեծ եղեռնից հետո գործածության մեջ մտած հայաստան ածականից՝ -ություն գոյականակերտ ածանցով, ցեղասպանություն, ազգասպանություն, ինչպես նաև հրեասպանություն բառերի համաբանությունում, գրաբարյան համանման կազմությունների փորձի հաշվառմամբ:

4. Հայաստանություն տերմինը կիրառվել (եւ կիրառվում) է Թուրքիայի իրականացրած Հայոց ցեղասպանության կապակցությամբ, ներկայումս գիտական խոսքում եւ մամուլում գործածվում է նաև Ազրբեջանի վարած հակահայ քաղաքականության առնչությամբ:

5. Հայաստանություն բառը բազմիմաստ է. տերմինի նշանակությունից (Հայերի կամ Հայություն ծրագրված բնաջնջում. արմենոցիդ) բացի ունի նաև ոչ տերմինային նշանակություն (Հայի կամ Հայերի սպանություն):

6. Թեպետ բազում գործածություններին, ընդունվածությանը՝ հայաստանություն-ը գրանցված չէ Հայերենի Հայաստանյան եւ սփյուռքյան բացատրական, հոմանիշների, թարգմանական եւ այլ բառարաններում (իբրեւ գլխաբառ կա Հայկական սովետական հանրագիտարանում եւ նորարանությունների մի բառարանում): Հարկավոր է լրացնել այդ բացը:

7. Հայաստանություն բառը հանդիպում է գիտական գրականության մեջ, ինչպես նաև մամուլի եւ հրապարակախոսության լեզվում, բայց ոչ պետական-պաշտոնական փաստաթղթերում:

РЕЗЮМЕ

В статье исследуются время и история создания слова հայաստանություն “арменоцид, геноцид армян”, семантическая структура слова, его терминологическая значимость, особенности употребления и лексикографическая обработка.

Выясняется, что слово հայաստանություն “арменоцид” в армянском языке (точнее - в западноармянском) появилось в 60-ые годы XX века, особенно в текстах армянского проф. Манасэ К. Севака (США), однако словообразовательная основа этого слова - հայաստան “убивающий армян” употребляется уже после геноцида армян 1915 года. Слово հայաստանություն сейчас воспринимается как общеармянское, употребляется в научной и публицистической речи, в языке СМИ.

Слово հայաստանություն соответствует термину “Armenocide - геноцид армян в Турции, начиная с конца XIX века до 1923 года”, который вошел в международный научный оборот в 1967 году благодаря ливанскому ученому-правоведу Мусе Пренсу (хотя имеются факты, подтверждающие употребление слова Armenocide, а также слова հայաստանություն в значении “резня армян” еще до ар-

мянского перевода книги Пренса). В последнее время термин հայաստանություն обозначает также уничтожение армян в Азербайджане (1918-1994).

Рассматриваемое слово иногда употребляется также в нетерминологическом значении - “убийство армянина или армян”.

SUMMARY

In this article the time and the history of the formation of the word հայաստանություն “Armenocide, genocide of Armenians” are being examined, as well as the semantic structure of the word, its morphological value, peculiarities of usage and description in dictionaries.

It turns out that the word հայաստանություն “Armenocide” appeared in the Armenian (more precisely, in Western Armenian) language during the sixties of the 20th century, especially in the texts of American Armenian prof. Manase K. Sevak, though the derivational basis of this word - հայաստան “killing of Armenians” had already been used after the Armenian Genocide of 1915. The word հայաստանություն is now perceived as Pan-Armenian word as it is used in the literary language of Eastern Armenian, especially in scientific and mass-media language.

The word հայաստանություն complies to the term Armenocide “Genocide of the Armenians in Turkey from the end of the 19th century till 1923” which entered international scientific turnover due to Lebanese scientist-legist Musa Prince in 1967 (though there are facts that confirm the usage of the word Armenocide, as well as the word հայաստանություն in the meaning of “slaughter of the Armenians” before the Armenian translation of Prince’s book). Lately the term հայաստանություն also means destruction of the Armenians in Azerbaijan (1918-1994).

The researched word sometimes is also used in its non-terminological meaning - “murder of an Armenian or Armenians”.

